

ՊԱՎԵԼ ՉՈՔԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XVIII դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ճգնումների համար միավորման առանցք կարող էր ծառայել միայն եկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելուն ձեռնամուխ եղավ 1763 թ. գահի բարձրացած Սիմեոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Նրա բոլոր ջանքերը ուղղված էին առաջին հերթին Էջմիածնի հեղինակության բարձրացմանը, ժողովրդի կենսունակ ուժերի համախմբման ու պետականության վերականգնման երաշխավոր դարձնելու գործին: Այդ ուղղությամբ Սիմեոն Երևանցու ջանքերը ծրագրված են ու հետևողական: Էջմիածնի վերահսկողությունը պետք է տարածվեր հասարակության բոլոր շերտերի ու ջ գործունեության նկատմամբ և ամենուրեք: Սիմեոն Երևանցին վերստին սահմանում է հայոց ազգային պատկանելության չափանիշը¹, որը պետք է առաջնորդող դառնար կենտրոնացված ուժեղ հավաքականություն ստեղծելու ճանապարհին:

Էջմիածնի Հայոց կաթողիկոսության և Ռուսաստանի փոխհարաբերությունները մինչև 1765 թ. կրում էին գերազանցապես դիպվածային բնույթ, քեև հայտնի է նաեւ, որ 1760 թ. Վրաց Թեյմուրազ թագավորի Ռուսաստան ճանապարհվելու առիթով Հակոբ Շամախեցի կաթողիկոսը հատուկ միջնորդական-համձնարարական նամակով Ռուսաց արքունիքին առաջարկում էր ընդառաջել Թեյմուրազ Երկրորդի առաքելությանը՝ նրա խնդրանքները ներկայացնելով նաև որպես Հայոց համար ևս օրախնդիր հարցեր: Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ նամակի բնագիրը մնացել է Էջմիածնում և չի հասել հասցեատիրոջը²: 1763 թ. հաջորդելով Հակոբ Շամախեցուն, Սիմեոն Երևանցին կանգնեց մի շարք հրատապ խնդիրների լուծման առաջ: Մահմեդականության տիրապետության պայմաններում Էջմիածինը բազում դժվարությունների էր հանդիպում ոչ միայն մահմեդական իշխանությունների հետ հարաբերություններում, այլև հայ իրականության մեջ առկա բազում տարածայնությունների ու անհոգությունների պատճառով:

Դեռևս Հակոբ Շամախեցի կաթողիկոսը իր զահակալության ժամանակ, Պարսկաստանում կենտրոնական իշխանության վերացումից և տեղական խսաների ինքնիշխան դառնալուց հետո, Էջմիածնի Աթոռի պահանջները (14 կետով) ներկայացրել էր Երևանի խանին (1173=1759թ.) և հաստատել տվել այն: Իններորդ կետի պահանջն էր. «Տաճիկք բռնութեամբ զՀայս մի՛ տանկացուսցեն»: Նույն վստտաթուղթը Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հաստատել է տալիս նաև Երևանի Հյուսեյն-ալի խանին (1176= 1763թ.)¹: Նույն թվականին այդ իրավունքները հաստատվում են Իրանի կառավարիչ Քերիմ խանի կողմից:

Կաթողիկոսական Աթոռի և Հայոց եկեղեցու իրավունքները հայրենի երկրում ամրապնդելն ու սրբաշուքացնելը Սիմեոն Երևանցու համար դառնում են առաջնահերթ խնդիրներ: Նա կազմում է Ջամբու կոչված ժողովածուն, որ իրավական վավերագրերի հավաքածու և Հայոց եկեղեցու համառոտ պատմությունն է: Սիմեոն Երևանցին գրում է, թե «յուսամբ, զի [Աստուած]... այց արասցէ և վերանորոգեսցէ զհնութիւն խղճաւոյ ազգիս մերոյ և վանօրէիցս: Եւ յայնժամ եթէ զշէնս ոչ, զոնէ զաւեր տեղիսն մըից և զվիճակս իւրեանց ճանաչեսցեն իւրաքանչիւրքն»²:

Որոշակի նպատակադրումով Սիմեոն Երևանցին 1766թ. Պետերբուրգ է ուղարկում մի դեսպանություն՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ³: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսահայոց թեմը Գանձասարի կաթողիկոսության իրավասությունից Էջմիածնի իրավասությանը փոխանցելը և Ռուսաստանի հայ համայնքի կողմից միայն Էջմիածնի գերագահության ընդունման ապահովումը: Պատվիրակությունը սրտովով կատարեց իր առաքելությունը⁴ և 1768թ. վերադարձավ Էջմիածին՝ իր հետ բերելով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանագիրը այն մասին, որ Հայոց եկեղեցու ոչ մի հոգևորականի չի թույլատրվի այլևս մուտք գործել Ռուսաստանի տարածք առանց Էջմիածնի երաշխավորության⁵: Այդ առիթով Սիմեոն Երևանցին գրեց Ռուսական կայսրուհուն ծոնված մի աղոթք, որը պետք է մշտապես կատարվեր պատահալի ժամանակ:

1773 թ. Սիմեոն Երևանցին, բնականաբար ոչ առանց նպատակադիր հստակ ցուցումների, Ռուսահայոց թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից նավով Հովսեփ Արղությանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարտվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Ջյուլուկ Կայմարջիում կնքված պայմանագրով /1774 թ. հուլիսի 10/, որի հաստատումն ու հրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղությանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն թարգմանում է հայերենի և առաքում Էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին իրավունք էր վերապահվում հանդես գալու Օսմանյան տերության մեջ քրիստոնյաների շահերի

պաշտպանությամբ⁸: Ստորև ներկայացվող նամակը հայերեն բնագրով և ռուսերեն երկու թարգմանությամբ պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանում պահվող Լազարյանների արխիվում: Այն անստորագիր է և անթվական: Ելնելով դեպքերի զարգացման ընթացքից, նամակի որոշ առանձնահատկություններից և համադրելով այլ վավերագրերի հետ, ակնհայտ է դառնում, որ նամակի հեղինակը Սիմեոն Երևանցին է: Պատասխան այդ նամակը պետք է թվագրել 1778-1779թթ., Հենվելով պայմանագրի վերոհիշյալ կետի վրա, Սիմեոն Երևանցին Հ. Արղությանին և Լազարյաններին առաջարկում է միջնորդել և հարց հարուցել Ռուսական կառավարության առաջ, որպեսզի Կ. Պոլսի Ռուսական դեսպանին ցուցում տրվի օժանդակելու և հովանավորելու նաև Հայոց եկեղեցա ներկայացուցիչներին: Ստորև բերում ենք այդ շատ արժեքավոր նամակի լիով տեքստը, որը մինչև այժմ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

«Ձայս ևս գիտացիր, հաշտութեան դաշնագիրն տեսաք և շատ հուտանեցաք: Աստուած միշտ յաղթօղ և բարձրագլուխ պահեսցէ ի պարծանս ամենայն քրիստոնէից: Բայց թպէտ այլ քրիստոնէից անուն զոյ ի մէջ նորին, Հայոց անունն բնաւ չկայ: Մանաւանդ մեծ բարեբարութիւն Ռէռումելու երկրի քրիստոնէիցն է եղեալ: Իսկ Անատօլու երկրի քրիստոնեայքն ե մանաւանդ՝ Հայքն, խեղճ մնան. թպէտ գրեալ է, թէ քրիստոնեայքն զինչ ցաւս ունիցին, մեր էլշուն արգ արասցեն, սակայն Անատօլու ու Հայքն, ի նոցանէ երկնչելով, ոչ կարեն արգ ստնել: Վասն որոյ ընդ օրինեալ իշխանին մերոյ աստուծով զօրացեալ Աղայ Յովհաննիսին խորհրդակցիցիս, եթէ կարելի իցէ, զրել տան մէջ հրաման ի վերայ Պօլիս նստօղ էլշուն, թէ՛ Պատրիարքն Հայոց ի յէջմիածնէ, եթէ մէկ խնդիր ինչ արասցէ քեզ վասն հաւատոյ, օրինաց և եկեղեցեաց՝ խող և կատարօղ լինիցի: Այս է մեծ օգնութիւն և բարեբարութիւն խղճալի ազգիս Հայոց և Աթոռոյս և յատկական յիշատակ իւրեան օրինեալ յանուան: Եթէ պատշաճ տեսցէ, ես արգայ գրեցից օրինեալ մօրն ողորմութեան և կամ մեծ իշխանին: Ձայսմանէ խօսեալ՝ մեզ ծանուցես: Բաւ է»⁹.

Ուշագրավ է այն փաստը, որ ինչպես նամակում է պահանջ դրվում, իրոք նայն բովանդակությամբ մեկ հրամանագիր ռուսական արքունիքը 1781 թ. հունվարի 11-ին¹⁰ ուղարկել է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ստախիևին, երբ արդեն մոտ կես տարի առաջ վախճանվել էր Սիմեոն Երևանցին: Հրովարտակի մեջ Ստախիևը տեղեկացվում է Էջմիածնի կաթողիկոսության և Ռուսական արքունիքի միջև ծավալված փոխհարաբերությունների մասին սկսած 1768 թ.: Ապա հրամանագրում նշվում է, թե Հովսեփ Արղությանը կաթողիկոսի անունից նոր պահանջներ է առաջադրել. մասնավորապես. «чтоб препоручено было вам, как нашему при Порте Оттоманской министру, оказывая со стороны вашей помощь и защищение присылаемым в столицу Турецкую от

патриарха Армянского начальникам духовенства при встречающихся для них надобностях”¹¹:

Առայժմ մենք չունենք որևէ վկայություն այդ թվականներին Հայաստանում որևէ խնդրի շուրջ Ռուսական դեսպանության կողմից օժանդակություն ստանալու մասին, սակայն այդ հնարավորության հիմքերը արդեն իսկ ստեղծվել էին Միմեոն Նրևանցու և Հովսեփ Արղությանի ջանքերով¹²: Շուտով այդ հնարավորությունը օգտագործվեց, սակայն, միայն Հովսեփ Արղությանի կաթողիկոսական թեկնածության առաջադրման, ապա և Դավիթ-Դանիելյան հայտնի հակամարտության բոլորքման նպատակով:

Քերիմ իսմնի մահը Իրանը նորից կանգնեցրեց քաղաքական փլուզման և իշխանատենչ ուժերի երկարատև բախումների փաստի առաջ: 1779 թվականը ծանր տարի էր բուն Հայաստանի և հատկապես Արարատյան դաշտի բնակչության ու Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի համար: Հերսկ Նրկորդիլի տրշավանքը մեծ վնասներ էր բերել ոչ միայն տնտեսությանը, ցանքատարածություններին, այլև բնակչության բռնագաղթից հետո սրել հարաբերությունները մահմեդական իշխողների ու իսլլ բնակչության և, մասնավորապես, Էջմիածնի Աթոռի հետ¹³:

1780 թվականի հունվարի 1-ին անակնկալ Հովհաննես Լազարյանին ու Հովսեփ Արղությանին այցելում է Ի. Պ. Գորիչը և հայտնում «զգնալն իրենաց ի վեղայ Պարսից առ ի տիրել զծովեզերեայ տեղիսն»¹⁴: Հովսեփ Արղությանը իր օրագրում պատմում է 1780 թ. հունվարի առաջին երկու շաբաթների անընդմեջ հանդիպումները Ա. Վ. Սուվորովի և Գ. Ա. Պոտյոմկինի հետ¹⁵, որը նոր վաղ էր նախանշում հայ-ռուսական հարաբերություններում: Հայոց քաղաքական դիրքորոշման կաբևորությունը Ռուսաստանի համար իր կնիքն է թողնում նաև եկեղեցական-դավանական հարցերի լուծման վրա: Հայ գործիչներն ավելի հաստատակամորեն են պնդում դավանական պատկանելությունն անխաթար պահելու իրենց վճռականությունը և միաժամանակ Ռուսական եկեղեցու հետ հարաբերություններում սստնում հենց ռուսական քաղաքական շրջանների աջակցությունը¹⁶:

1780-1790-ական թվականներին անընդմեջ ստվարացող ռուսահայ գաղթօջախում ձևավորվող դավանական փոխհարաբերությունները ևս - ձեռք են բերում քաղաքական ուղղվածություն: 1779 թ. փետրվար-մարտ ամիսներին Հ. Արղությանը այցելություններ է կատարում Մոսկվայի արքեպիսկոպոս Պլատոնին, որը «բազում խօսակցութիւնս տրար վասն հաւատոյ մերոյ և աւանդութեանց եկեղեցւոյ, և յաղագս գլոյարտութեանցն Յունաց առ մեզ, և վասն պէսպէս բաջադմանց Յունաց յաղագս պաւոնցն սրբոյն Սարգսի, զորս ամենայն լուծաք. և գտուեալ պատճառսն մեր ողջամիտ վարդապետութեամբ ընկալաւ»¹⁷: Նույն թվականի մարտի 31-ին «սրբազան Պլատոնն իրաւիրեաց զմեզ զմալ ի սօթօն և անդ տեսանել

գաութը պատարագն և զհանդեսն մեծ...զմացաք ընդ ազնուացն մերոց Աղայ Յովհաննեսին և Ալայ Մինասին. տարան զմեզ ի սեղանն սուրբ և ւստի տեսաք զբոլոր հանդեսն. յոյժս յարգեցին զմեզ ի սեղանոցն ամենայն դասքն հոգեկորաց, և բազմաց խալսքեր լեալ անխմաստ և զոեհիկ ժողովրդեանն մոտն մեր անդ. և զբազում թունալի նետս էին արծակեալ առ սրբազան Պաւստոս արքեպիսկոպոսն վասն տանելոյն զմեզ ի սեղանն, որպէս ինքն և այլք պատմեցին մեզ, զի միտք նոցա զհետ էր ընթացեալ առասպել եւ անխաղճ գրեցելոց, զրպարտութեանցն Յունաց որ ւտ մեզ. անարժան վարկանէին զտանել մեզ ի սեղանի ւնդ: Բայց վառելսն աստուածային հոգովն սրբազան արքեպիսկոպոսն քամահեալ զսնոտի բաշտմունս անխմաստից լայր ի վերայ կուրտութեան նոցա, բայց զկնի այսր մինչ յաճախեցին բազմութիւնք ի յեկեղեցիս մեր ի ժամ պատարագելոյն մերոյ նախարարք և իշխանք, վաճառականք և հասարակ ժողովուրդք, թուլացաւ աղաւաղել նոցա և մանաւանդ թէ՝ յառաջինն էր այս տեսութիւն նոցա Հայոց եպիսկոպոս իւրով ձեռով զտանիլ ի յեկեղեցիս իրեանց»¹⁸:

Արդեն իսկ 1780 թ. փետրվարի 18-ին մեծ հանդիսավորությամբ կատարվում է Պետերբուրգի սուրբ Կատարինէ եկեղեցու օծումը, որը շրջադարձային դեր պիտի ունենար Հայոց դավանության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման գործում: Օծման հանդիսություններին, ըստ Հովսեփ Արղությանի Հիշատակարանի, ներկա են եղել «ամենայն նախարարքն և յոյժ հաւանեցան ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցոյ *և բազում զայթակողութիւնք բարձան*»¹⁹:

Հայոց համակրանքը շահելու ձեռնարկումներից էր նաև նույն թվականի մայիսի 9-ին Հովսեփ Արղությանին ու Հովհաննես Լազարյանին կայսրուհու, իսկ հունիսի 4-ին՝ թագածառանգ Պավել Պետրովիչի կողմից ընդունելության արժանացնելու փաստը: Մեկ տարի անց, 1781 թ. մայիսի 9-ն, Հովսեփ Արղությանի արձանագրմամբ, «հաստատեցաք ի Նախիջևան քաղաքոջս զհոգեոր դատարանս և եղաք ի նմա զբազում կանոնս ի շաղղաց նախնի հարցն մերոց ի կառավարութիւն նմին և... կարգեցաք ի նմա հոգևոր դատաւորս, զմի վարդապետ և զերկու քահանայս»²⁰: Նոր Նախիջևանի հոգևոր դատարանի կանոնադրությունը, որ տպագրվել էր 1795 թ. Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի տպարանում, բաղկացած էր վեց մասից և պարունակում էր 126 հոդված, որով առաջնորդվում էին Ռուսաստանի բոլոր հայկական եկեղեցիները մինչև 1836 թվականի նոր կանոնադրության ընդունումը²¹:

Ռուսաստանում ճանապարհորդության ժամանակ Հովսեփ Արղությանը առիթ է ունեցել հանդիպելու բարձրաստիճան ռուս հոգևորականության ներկայացուցիչների հետ և արժանանալու հատուկ ընդունելության: Իր Հիշատակարանում նա գրում է, թե 1781 թ. հունիսի 12-ին «հանդիպեցաք ի Բօլթաւ քաղաքն առ արքեպիսկոպոսն Նիկիփիոռ, որ էր

առաջնորդ Քերստնու և Նոր Ռուսաց. իջաք ի վրանսն, պահեաց զմեզ երկու օր և Լցոյց զբազմադիմի մարդասիրութիւնս: Եւ անտի զնացաք առ գուսֆ Պետր Ալէքսանդր Ռումենցով ֆրոթա/րչալն ի զլուք իւր Վլադիկալս, որում եղև յուրախութիւն յոժ, իջոյց զմեզ ի վրանի զեղեցկագունի, զոր ի յՕսմանցոյցն Լ. զերեալ. պահեաց զմեզ չորս օր և յամենայն աւուր՝ առաւոտ և երեկոյի, առ մեզ զայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել:... Եւ յետ բազում մարդասիրական պատուոյն կամեցաւ առաքել զմեզ ի Քիով քաղաքն, յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց... Գրեաց զիւր յամենայնարական առ սրբազան Գաբրիէլ մետրոպօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն Ջօսիմէ, և առ կոմենդանտն Իվան Ստեփանիչ Կուկիտովն՝ ընկալնուլ զմեզ և սրտաւ ցուցանել: Պեչերսկի վանքում արժանանալով պատվավոր ընդունելոյթյան Ջոսիմէ արքիմանդրիտի կողմից. Հ. Ալլուրթյանը հրապարակել է Գաբրիէլ մետրոպօլիտի մոտ, որը ևս «բազմադիմի պատիւս և սէրս եցոյց և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զԳանձ արամեանն ունելով ի ծոռին, զովեր ի մէջ հրապարակին, յորում էին հոգևորականքն և երևելի աշխարհականք՝ թէ՛ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն, և այլ աշխարհի բանս համարձակորէն և սա ընկալեալ զմեզ ի սեղանն սուրբ, և յետ արձակման սրբոյ պատարագին, զնշխարս տային մեզ և զգինի: Եւ յեկանելն մեր ի յեկեղեցոյն խառն ի ճաղասն՝ ամբողջն՝ անցեալ ի վերայ մեր, ամենեքին աջ առեալ՝ գօրհմութիւն խնդրէին»²²:

Սիմեոն Երևանցուն հաջորդած Դուկաս Կարնեցու գահակալության տարիներին, օրինակ. կազմված Հայ-ռուսական դաշնագրի մախազի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմունք: Երկրորդ կետով պահանջվում էր «Ջիեստեալս յիւրաքանչիւր ազգացս չընկալնուլ ի հաղորդութիւն իբր զպղտորիչս և խռովարարս սիրոյ և խաղաղութեան», իսկ երրորդ կետով՝ չարգելել մահմեդականների և հեթանոսների կողմից Հայոց դավանանքի ընդունումը: Սրանք հարցեր էին, որոնք իրավական կարգավորում էին պահանջում, հրատապ խնդիրներ էին կենդանի իրականության մեջ, քանզի Հայոց եկեղեցին ստիպված էր մեծ նեղությունների գնով դիմագրավել ռուս հոգևորականության ճնշմանը: Այդ մասին վկայում է 1782 թ. Հովսեփ Արդարյանի արձանագրած այն փաստը ևս, թե Մոզդոկի Հայոց եկեղեցին, որ «չարաճելի Գորգի ում կամեցեսոյ էր ռուսանալ և զեկեղեցին զայն ևս դարձուցանել, որոյ աղագաւ եպիսկոպոսն Ռուստաց և գուրեռնարն վճիւն էին հաստատեալ՝ հրամանաւ Սինօքին ընկալնուլ, իսկ Մոզդոկու ժողովուրդն ոչ էին տուեալ առանց մեզ, այլ և զգիրս իւրեանց գրեալ էին մեզ: Մեք գրեցաք Հաշտութիւնս գուրեռնաթին, մինչ ոչ ինչ օգտեցաք ի մմանէ, բողոք մեր արկաք առ սրբազնասուրբ Սինօքի գահակալ Պետրապօլքո արքեպիսկոպոս Գաբրիէլն, մա յուսադրեալ մեզ, խօսեալ ընդ գահակցացն իւրոց. և ընդ պայծառափայլ քնեսգին, մխի-

քարեալ յուսադրեալ մեզ, և առաքեալ առ քնեագն: Քնեագն, որպէս հարկն էր, գրեաց սաստ և յանդիմանութիւն Հաշտարխանու գորեոնաքին և եպիսկոպոսին՝ ի բաց թողալ զեկեղեցին մեր և մի մեղեզ գմեզ, որ ընդդէմ է կայսերական մեծութեան զթութեանն... Յետ այսորիկ գրգռիչ Գօրկին և ընկերքն զղջացեալ ի յանկատար աւարմանց իւրեանց, զիւր մեղայական գրեցին մեզ և մեք ընկալաք գնոսա ի հաղորդութիւն եկեղեցւոյ»²³:

Հայոց եկեղեցու համար դավանական հանդուրժողականության մթնոլորտ ձևավորելու գործում մեծ կարևորություն ունեւ Պսոլել Առաջին կայսեր կյանի ուսուցիչ Պլատոն միտրոպոլիտի դիրքորոշումը: Ըստ Հ. Արդոթյանի վկայության, Պլատոնը բազմիցս սանձել է ռուս ե հույն հոգևորականության հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցականների դէմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականությամբ Հ. Արդոթյանի նախաձեռնությամբ, Պետերբուրգում հայերենի եմ քարգմանվում Պլատոն միտրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբանությունը», «Քարոզներ» և «Ուղղափառ կրթություն» գրքերը /քարգմանիչ Ստեփանոս Ասլանյան/²⁴: Ռուսերենի է քարգմանվում և Պետերբուրգում 1799թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը»²⁵ գիրքը, որն այնուհետև Պետերբուրգում Վրաց դեսպանության քարտուղար Գեորգի Ավալիշվիլին ռուսերենից քարգմանում է մաս կտացերենի²⁶:

1793 թ. մայիսի 17-ին Աստուխանից Հ. Աբդուլթամին գրած մամակում հայտնվում է, թե տեղի ռուս հոգևոր առաջնորդը ոչ միայն մեծ օժանդակություն է ցուցաբերում հայ հոգևորականությանը, այլև պատժում է անգամ այն հայերին, որոնք դավանափոխության նպատակով դիմում են իրեն. «Ծովինարն մէկ տղայով և իւր որդովն գնացեալ էր Ռուս դառնայ, գանելով վսրեալ էր և մեզ կոչեալ առ ինքն, թէ դու ևս բերել տացես առ քեզ և զանեսցես և հարցցես, թէ վասն ո՞րր թողուն զհաւատս իւրեանց և այսպէս անարգեալ եղեն Ռուստի հաւատ կամեցողքն, և բոլորքն զիտացին, որ արքերէյն»²⁷ գանիւք վարեալ է, վասն այսմ այսուհետև ո՞վ համարձակի գնալն»²⁸: Այդ իրավիճակը, սակայն, ամենուր չէ, որ ընթանում էր առանց հակամարտության ու ընդհարումների: Որքան Ռուսական եկեղեցու բարձր աստիճանավորները հանդուրժողական և գոսա վերաբերմունք էին դրսևորում հայոց նկատմամբ, նույնքան տեղերում ռուս հոգևորականությունը գործում էր առավել թելադրական գործելաոճով: Այդ առանձնապէս ակնհայտ դարձավ 1790-ական թվականների կեսերին, երբ աշխարհիկ իշխանությունները ևս ակնհայտորեն սպաստողական քաղաքականություն էին որդեգրել Այսրկովկասի նկատմամբ: Հովսեփ Արդոթյանը արձանագրել է ստեղծված իրավիճակը 1795 թ. մայիսի 20-ին Աստուխանից գրած իր մամակներից մեկում²⁹: Հ. Արդոթյանը ևս հայ-ռուսական հոգևոր-դավանական փոխհարաբերությունները լծորդված ու պայմանավորված է լիտարկում ու ներկայացնում

աշխարհիկ իշխանությունների քաղաքականության հետ: «Իմ տառապանքն ինձ ոչ է բուսական, տեսեք այժմ զի՞նչ լսեք. ևս զկեանս իմ տուեալ եմ ի գոհ վասն ծառայութեան քազուհւոյն՝ յաղագս դիւրութեան ազգին իմոյ, որպէս և նորին մայրական խնամօքն յուսադիւս եմք ամենայն ւազգաւ, և զնոյն յամենայն ուրեք հոշակեմք զբոլ. և ամենայն ոք փափուզի զալ յերկիրս այս եւ առանց նեղութեան բնակիլ. հայրն լինել հայր ուրոյոց՝ առանց երկխօլի բռնաւորաց, և տեարքն՝ տեարք ծառայից»¹⁰. Հ. Արղությանը բողոքում է Աստրախանում ստեղծված իրավիճակի դեմ. «Որովիք անհնազանդ ծնողաց՝ քերականութիւն, ի բարկանալն հարց. զնան և մկրտին, և եպիսկոպոսն տեղոյս՝ իսկոյն ընկալնու, որպէս ընկալտ 11 տարեկան մէկ անճար արքայտի ուրլի, որոյ հօր արտաստաւի զիրն ահա ուղեղոքն ձեզ, թպէտ առաքեցի առ եպիսկոպոսն, բայց ոչ կամեցաւ լսել: Մեր Թուրոս Այվազովի 14 տարեկան եղբայրն, բարկացել ի վերայ մօրն. զնաց ռուսացաւ և նս ընկալաւ. մայրն մնաց յալով՝ զրկեալ ի յորդոյն, ուրլին այլոց ծառայէ, իսկ ծնօղն, որ սնուցեալ է, ի ծնութեան հասակին զրկեալ է յորդիական ծառայութենէն: Պարտաւտեարք և փախստականք զնան և նոքա ընկալնուն»¹¹:

Հայերի դավաճանաբարությունը եթե ոչ լիովին կանխելու, ապա գեթ սահմանափակելու նպատակով ռուս հոգևորականության հետ հայոց փոխհարաբերությունները Հովսեփ Արղությանը փորձում է կարգավորել դիմելով ոչ միայն բարոյական ու քաղաքական միջոցների, այլև իրավական լծակների գործադրմանը: Նա գրում է, որ իր խնդիրն այն է ռուսական հոգևորականությունից և, մասնավորապէս, Աստրախանի հոգևոր առաջնորդ եպիսկոպոսից. թե «կատարեալ հասակի անձինք յորժամ զան առ քեզ. նախ սպլուսկ արա յամենայն դատաստանսն, որպէս օրենքն է. և ապա ընկալ, իսկ անկատարքն յետ դարձո, զի նոքս հաւատ ոչ ճանաչեն: Մի զրկեր զծնօղս նոցա ի վայելմանն որոյոց»: Այդ պահանջին Աստրախանի Ռուսաց հոգևոր առաջնորդը «ուչ եթէ կամեցաւ մեզ բաւականութիւն տալ, այլ բարկացաւ ևս, թէ՝ որպէ՞ս համարձակի Հայոց արքեպիսկոպոսն նումրայիս ինձ զիր գրել, և հանդերձեալ մեծ հալածանս յարուցանել. թէ՝ զհար՞դ համարձակիք զանգուկ այնքան յարկանել և կամ համարձակ կատարել զօրէնս ձեր»¹²: Հ. Արղությանը հիշեցնում է քաղաքական իշխանության վերաբերումը հայոց նկատմամբ, որ հակադիր էր հոգևոր իշխանության այդ քայլերին. «Եւս ոչ զիտեմ, ու՞մ հնազանդիմ. կայսերական ողորմութեան ազատութեա՞նն, եթէ բռնութեան տրին»: Ավելին, Հ. Արղությանը փորձում է զուգահեռներ նշելով մահմեդական տիրապետության և Աստրախանի առաջնորդի գործողությունների միջև, զգաստության կոչել արքունի գործիչներին. «Միթէ Թուրքի երկրումն մեր զաւակն խլեն և առանց պատճառի ի հաւատոյն հանեն, ո՞չ ապաքէն վասն այն զան և ժողովին ազգ մեր յերկիրս այս, որ յայսպիսի բռնութեանց փրկին»¹³: Հայ իրականության մեջ ռուսադավանութե-

յան անցնելու առանձին փաստերը ևս կանխելու համար Հ. Արղությանը փորձում է ստանալ ռուս հոգևորականության պաշտպանությունը: Նման օրինակներից էր Հնդկաստանում գտնվող տեր Ստեփանի «բեղովլսք եղրայրն», որ «ռուսացեալ է, թէ յեղբորես փող է եկեալ, ինձ չեն տալիս, նորա կինն և փոքրիկ որդին դողեալ կան յանկեան, որ բռնութեամբ չռուսացնեն»³⁴: Անհրաժեշտ էր հզոր կռիվանքերով կասեցնել հայոց նկատմամբ գործադրվող դավաճանական խտրությունները: Հ. Արղությանը հարցադրումը կրկին փոխադրում է հայերի Ռուսաստան փոխադրվելը հարցականի տույն դնելու սպառնալիքի մակարդակ. «Ահա յուսադրութեան պտուղն երկրիս, ո՞ր երեսօք գրեմ ումեք, թե՛ եկեք և զհանգստութիւն վսեյեցեք. ես ճանապարհորդ եմ և ծառայօղ թագաւորութեան հրսմանին, և սոքա յայսպիսի բռնութիւն կան, ոչ ուքազի լսեն և ոչ հրովարտակի, ոչ արդարութեան ունկն դնեն և ոչ ճշմարտութեան»: Միակ միջոցը հայ հասարակության անունից հանդես գալու և հիմնավորված պահանջի առաջադրումն էր բարձրագույն հոգևոր ատյանի առաջ: Իր փաստարկումները ներկայացնելով հայագգի գործիչներին, Հ. Արղությանը շեշտելով, թե «բութ ևս ազգ էք Հայոց, օգնեցեք մեր ազգին», պահանջում է նրանցից, գրավոր կերպով դիմել սինոդի գեներալ-պրոկուրոր Ա. Ի. Մուսին Պուշկինին, որ «բարեկամ է, ապա է նա այր բանական և խելօք»: Պարզվում է, որ Հ. Արղությանը տեղյակ էր նաև, թե Աստրախանի ռուսաց հոգևոր առաջնորդը դիմել էր Ա. Ի. Մուսին Պուշկինին՝ Հայոց եկեղեցու զանգերը հնչեցնելու դեմ լինելու պահանջով, սակայն և պատասխան ստացել, թե «լոեա, քոյ բանն չէ»: Ռուսական եկեղեցու առանձին ներկայացուցիչների նկրտումներին դիմագրավելու գործում հայոց համար կարևոր լծակ էր ռուսական աշխարհիկ իշխանությունների կողմից ցուցաբերված օժանդակությունը ստանալու հանգամանքը, մանավանդ որ հետզհետե ավելի էր կարևորվում հայոց դիրքորոշումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում: Այդ ակնհայտորեն դրսևորվեց 1795 թվականի ընթացքում, երբ Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո սկսեց քննարկվել ու ծրագրվել Ռուսական բանակը Այսրկովկաս ուղարկելու հարցը: Ինչպես հայտնի է, լսյդ արշավանքին իր մասնակցությունը բերելուն հրավիրվեց անգամ անձամբ Հովսեփ Արղությանը:

Այլ էր իրավիճակը Ռուսաստանում կաթոլիկ դավանանքի հոգևորականության ներկայացուցիչների հետ հայ հոգևորականության ունեցած փոխհարաբերությունների պարագայում: Ռուսաստանի կաթոլիկ համայնքում մեծ թիվ էին կազմում *հայագգի կաթոլիկները*, որոնց ստաջնորդն էր Օնոֆրիուս Օհանջանովը³⁵: Տեղի տալով Հ. Արղությանի համառ ջանքերին, Ռուսական կառավարության հանձնարարությամբ 1794 թ. հունիսի 18-ին Մոզիլիկ կոնսիստորիան հրամայում է հայ կաթոլիկներին առաջնորդ Օ. Օհանջանովին, թե օրենքով արգելվում է բռնի կաթոլիկ

դավանանքի դարձնել որևէ մեկին /տվյալ դեպքում խոսքը առաջին հերթին հայալուսավան անձնավորության մասին է/, իսկ հունադավան ռուսներին՝ արգելվում է կյոնափոխ անել ընդհանրապես: Հ. Այդուքյանը փորձում է ստանալ ավելին. նա, օգտագործելով պահի կարևորությունը, կառավարությունից պահանջում է թույլատրել կաթոլիկ հայերի վերադարձը հայալուսավորության և միաժամանակ սրգելել նաև հայերի անցումը ռուսադավանության: Ռուսահայոց համայնքը XVIII դարի վերջին ռուսական իշխանությունների կողմից ստանում է կարևոր հավաստիացում իր կարգավիճակի ամրապնդման համար:

Պսվել Առաջինի 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրերում շեշտվում է, որ թույլատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կյոնական հարցերում ենթարկվել միայն Էջմիածնի կաթողիկոսին ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Այդուքյանին: Ավելին. Ղուկաս կաթողիկոսի մահից հետո, Ռուսական սրբաճիքը պաշտպանում է Հ. Այդուքյանի թեկնածության առաջադրումը Հայոց կաթողիկոսական գահի համար և Ռուսական բանակի Վրաստանում լինելու հանգամանքով թելադրված՝ Հովսեփ Այդուքյանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում Վրաստանը Ռուսաստանին միացնելու Պսվել Առաջինի հրովարտակը:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, որ հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ուղղվածությունը XVIII դարի վերջին հիմնականում պայմանավորվում էր քաղաքական հարաբերությունների պահանջով ու մակարդակով:

PAVEL CHOBANYAN

ARMENIAN-RUSSIAN CHURCH RELATIONS IN THE SECOND HALF OF XVIII CENTURY

In the second half of the XVIII century Armenian population in Russia was increasing. Under more active Russian policy in the East and along with improvement of Armenian-Russian political relations, the Armenian-Russian church relations became closer and more tolerant.

Owing to mediation of political authorities, the Armenian Church in Russia stayed free from religious restrictions, new churches were built and Church Charter of the Armenian Church of Russia was developed.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Որպես Զրիստոս, ըստ ամենատեսակ բարերարութեանն, իշխանութիւն ունի ի վերայ հասարակ մարդկայինս բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Զրիստոսի՝ Սուրբն Դրիգոր, ըստ բազմատեսակ բարերարութեանն,

- իշխանութիւն ունի ի վերայ յատուկ ազգիս Հայոց. գորմէ բացասողն պարտի նախապէս գՀայկազնութենէն և գՋրիստոսական հաւատոյն իրմէ րացասել: Քանզի որ Հայկածին է և հաւատացեալ Ջրիստոսի, սովաւ և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն...» /Սիմէոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 51/:
2. Նամակը գրված է 1760 թ., իսկ Թեյմուրազ II-ը Վրաստանից ճանապարհվել էր արդեն 1759 թ. վերջերին և արդեն գտնվում էր Ռուսաստանում:
 3. Ջամբո, էջ 234:
 4. Ջամբո, էջ 271:
 5. Դիան հայոց պատմութեան, զիրք Գ, էջ ԳԻԱ-ԳԻբ: Г. Эзов. Начало сношений эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.
 6. Պատվիրակության հաջողությանը իր օժանդակությամբ նպաստել էր նաև Հովհաննես Լազարյանը և այդ առիթով նամակ գրել Սիմեոն Երևանցուն (տես Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 140-141):
 7. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.76-77.
 8. Տեքստը տես **Е. И. Дружинина**. Ключок Кайнарджийский мир. Москва, 1955, с. 352.
 9. ՄՄ, Լազարյանների արխիվ, րդթ. 109, գործ 22, վավ. 24. հայերեն բնագիր:
 10. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171. Հրովարտակի հայերեն բարգմանությունը տես «Դիան հայոց պատմութեան», IX, Թիֆլիս, 1911, էջ 49-52: Նման բովանդակությամբ հրահանգ առաքվել է Արտաքին գործերի կոլեգիայից նաև Գ. Ա. Պոտյոմկինին նույն օրը: Տես АВРР, ф. СРА, 100/3, 1764-1800, д. 462, л. 167. копия:
 11. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171.
 12. Հայտնի է միայն, որ 1798 թ. Պավել Առաջինը ևս նման հրահանգ ուղարկել էր Կ.Պոլսում ռուսական դեսպան Վ. Տամարային՝ կարգադրելով հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից ուղարկված հայ հոգևորականներին: ՄՄ, ԿԴ, րդթ. 8, վավ. 15 /պատճեն/: Տես նաև Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում /1780-1800/. Երևան, 1958, էջ 197:
 13. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.156. Այս վավերագրում խոսվում է Հերակլի կողմից Արարատյան դաշտի 15 հազար հայերի Թիֆլիս փոխադրման, Երևանի խանի կողմից Էջմիածնի վանքի վեց միաբանների սպանության մասին:
 14. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152.
 15. «Յուզվարի 2. Ենարալ պոռոճիկ Ալեքսանդր Վասիլիչ Սուվորովն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ աղայ Յովհաննէսն ընդ մեա ի վերայ նոյն նիրոյն. և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս»: Տես Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152-153:
 16. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 45-46:
 17. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 16:
 18. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 19-20:

19. Ընթերցված քարոզը նախապես բարգմանվել էր ռուսերեն և, 500 օրինակ տպագիր ձևով բաժանվել իշխաններին, իսկ գեղեցիկ կազմված մեկ օրինակը Գ. Ա. Պոտյոմկինի միջոցով մատուցվել կայսրուհուն: Օրինակներ էին ուղարկվել գահաժառանգ Պավելին և Սարիա Ֆեոդորովնային, որ Հովհաննես Լազարյանի միջոցով փոխանցվել էին Նիկիտա Պանինին՝ հանձնելու ըստ սլատկանելվոյն: Տես Դիան հայոց պատմության, IX, էջ 4, 26-27:
20. Դիան հայոց պատմության, IX, էջ 6:
21. Հովհ. Տեր-Արրահանյան. Հովսեփ Չորրորդ Երկայնաբազուկ-Արդուբանց, ընդհանրական առաջնորդ ռուսիաբնակ հայոց /1773-1800/, իշխան կայսերության և Ռուսաց և կարողիկոս ամենայն Հայոց. ՍՊԲ, 1881, էջ 6-7:
22. Դիան հայոց պատմության, IX, էջ 8-9, 42-44:
23. Դիան հայոց պատմության, IX, էջ 46:
24. Ուշագրավ է, որ Պլատոն արքեպիսկոպոսի քարոզների ռուսերենից հայերենի ռարգմանությամբ զբաղվել է մաս Հովակիմ Աղազարի Լազարյանը: Տես Վ. Դիլյան. նշվ. աշխ., էջ 190:
25. "Вероисповедание Армянской церкви", СПб, 1799.
26. ღია კიკნაძე გიორგი ავალიშვილის ცხოვრება და შემოქმედება. თბილისი, 1993, გვ. 121.
27. Իմա՝ архiereй.
28. ՄՄ. ԿԴ. բր. 6, վավ. 42. քնագիր:
29. Հ. Արդուբանց, վճռելով դիմագրավել ռուս հոգեորականության կամայականություններին, Սոսկվայի ու Պետերբուրգի հայ գործիչներին նախապես նամակով տեղեկացնում և սլախանջում էր նրանց միջամտությունը՝ արքունիքում և սինոդում հենարան գտնելու համար:
30. Դիան հայոց պատմության, IX, էջ 178:
31. Դիան հայոց պատմության, IX, էջ 178-179:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. О. Охсанцманови маахн тхн м. тамаара Швиго. иагториа каауоликобиаа кярувегггггга "шориа, тб., 1901, гв. 488-490, 823, 833, 835. Ambrosius Eszer. Missionen im Halbrund der Länder zwischen Schwarzen Meer. Kaspisee und Persischem Golf: Krim, Kaukasien, Georgien und Persien.- Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria rerum, Vol. II, 1700-1815, Herder. Rom-Freiburg-Wien, 1973. S. 448. Պ. Չորանյան, Վրաց ուղեգրությունները.... էջ 116: Ա. Էսցերը, հետևելով Մ. Թամարապիլուն, բյուլիմացաբար նրան համարում է վրացի: